ՀՀ Վերահսկիչ Պալատի նախագահ՝ պրն. Իշխան Զաքարյանին

Պատճենը՝ ՀՀ Ֆինանսների նախարար պարոն՝ Գ.Խաչատրյանին

Առարկան՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2014թ. մարտի 31–ի թիվ 12/1 որոշմամբ հաստատված «ՀՀ Վերահսկիչ Պալատի 2013թ. տարեկան հաշվետվության դրույթներում» պարունակվող անճշտություններ՝ կապված «Four Assist Development Consulting Limited» ընկերության հետ

Հարգելի պրն. Զաքարյան,

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ՀՀ Վերահսկիչ Պալատի 2013թ. տարեկան հաշվետվության դրույթներում տեղ գտած որոշ անճշտությունների վրա՝ կապված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության ծրագրի հետ, որը ՀՀ Ֆինանսների նախարարության պատվերով մեր կողմից իրականացվել է 2012թ. հունիսից 2013թ. հունիսն ընկած ժամանակահատվածում: Այս անճշտությունները, որոնք բուռն շահարկումներ են առաջացրել հայկական մամուլում, մեզ շատ մտահոգում են և պոտենցիալ վնաս են հասցնում մեր ընկերության համբավին:

Խնդրում ենք Ձեզ հաշվի առնել, որ «Four Assist Development Consulting Limited» ընկերությունը միջազգային խորհրդատվական ընկերություն է, որը գրանցված է Կիպրոսում 2007 թվականից: Մինչ օրս մենք իրականացրել ենք տարբեր ծավալի 103 ծրագիր Աֆրիկայի, Ասիայի, Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության 27 երկրում՝ Եվրամիության, Համաշխարհային Բանկի և այլ դոնորների ֆինանսավորմամբ: Մեր ինտերնետային կայքը՝ www.4assist.eu ներկայացնում է մեր ծառայությունների ամփոփ նկարագրությունը, մասնագիտացման ոլորտները, ինչպես նաև ծրագրերի հակիրճ բովանդակությունը:

Կարևոր է նաև նշել, որ Կիպրոսը, ինչպես Եվրոպական Միության, այնպես էլ Եվրագոտու անդամ է և ենթարկվում է Եվրոպական Միության բոլոր կանոններին և կանոնակարգերին: Դրանցից ելնելով, «Four Assist Development Consulting Limited» ընկերությունը ենթարկվում տարեկան աուդիտի, և մեր ֆինանսական և ֆիզիկական գործունեությունը գտնվում է Կիպրոսի ֆինանսների նախարարության ներքին եկամուտների վարչության վերահսկողության ներքո:

Մեր մտահոգությունները վերաբերում են 2013թ. տարեկան հաշվետվության հետևյալ դրույթներին.

ա) Հաշվետվության 2.1 «Պետական բյուջեի միջոցներով իրականացվող գնումների օրինականություն և գործող համակարգի արդյունավետություն» բաժնում գրված է. «*Նկատելի է ոչ ռեզիդենտ ընկերությունների «արհեստական ճանապարհով» ստեղծման և դրանց առկայության օգտագործման դեպքեր: Մասնավորապես, որևէ մրցույթով հետաքրքրված տեղական ընկերությունը միտումնավոր ստեղծում է որևէ ոչ ռեզիդենտ ընկերություն կամ կապ է հաստատում համանման ընկերության հետ, որպեսզի շահեկան դիրք գրավելու արդյունքում կարողանա հաղթող ճանաչվել մրցույթում և կնքել պայմանագիր: Արդյունքում, որոշ ոչ ռեզիդենտների մասնակցությունը պետական գնումներին դառնում է զուտ ձևական, գումարները փոխանցվում են Հանրապետությունից դուրս*» (էջ 9): Այս դրույթից հետո բերված է «Four Assist Development Consulting Limited» ընկերության դեպքը (էջ 10), որպես «արհեստական ճանապարհով» ստեղծված ընկերության օրինակ:

«Four Assist Development Consulting Limited» ընկերության հանդեպ այս դրույթի կիրառումը սխալ է: «Four Assist Development Consulting Limited» ընկերությունը ստեղծվել է

2007թվականին, շատ ավել վաղ, քան նույնիսկ այս ծրագրի գաղափարը ծագել է, և ինչպես նշված է վերևում, միջազգայնորեն ներկայացված է Հայաստանից բացի մեծ թվով այլ երկրներում:

բ) Հաշվետվության նույն բաժնի 10-րդ էջում առկա է պնդում, որ աշխատանքների ողջ ծավալը իրականացրել է PHP Partners ՓԲԸ հայաստանյան ընկերությունը ենթակապալառուի պայմանագրով:

<u>Այս դրույթը սխալ է:</u> Ֆինանսների նախարարության պայմանագրի հայտարարությունը պահանջում էր, որ լիդեր ընկերությունը հանրային հատվածի հաշվապահության միջազգային փորձ ունենա: «Four Assist Development Consulting Limited» ընկերությունը տիրապետում է այս փորձին ի տարբերություն PHP Partners ՓԲԸ-ին, որի փորձը սահմանափակվում է միայն Հայաստանով: Հետևաբար, աշխատանքների բաշխումով «Four Assist Development Consulting Limited» ընկերությունը լիդեր ընկերությունն էր, իսկ PHP Partners ՓԲԸ-ին հանձնարարվել էր աշխատանքների նրանց բաժինը՝ ելնելով հայաստանյան առանձնահատկությունների նրանց գիտելիքներից:

Հարկ է նշել, որ «Four Assist Development Consulting Limited» ընկերությունը, ի թիվս այլ ծառայությունների, տրամադրել է երկու միջազգային որակավորում ունեցող հաշվապահ (ներառյալ ծրագրի ղեկավարը)՝ ծրագրի իրականացման, որակի վերահսկողության և մի շարք այլ աջակցության ծառայությունների համար: Մրցութային փաստաթղթերում (Request for Expression of interest for RFP# IPSAS-CS-1.1 և Request for Proposals 23 դեկտեմբերի 2011թ.) Ֆինանսների նախարարությունը պահանջել էր.

- Հանրային հատվածի հաշվապահական կանոնակարգերը համապատասխանեցնել միջազգային նորմերին և պրակտիկային,
- Հաշվի առնել նույնօրինակ բարեփոխումներ իրականացնող երկրների փորձը, և
- Վերահսկել և ապահովել մատուցվող ծառայությունների և արդյունքների որակը միջազգային փորձ ունեցող մասնագետների կողմից:

PHP Partners ՓԲԸ չուներ տեխնիկական կարողություններ և միջազգային փորձ այս ծառայությունները մատուցելու համար:

գ) Հաշվետվության 2.8 «Ֆինանսներ» բաժինը ներկայացնում է Արտասահմանյան Ֆինանսական Ծրագրերի Կառավարման Կենտրոնի աուդիտի արդյունքները և կրկնում է վերոնշյալ (ա) և (բ) կետերում ներկայացված սխալները (էջ 34):

Վերոհիշյալ անճշտությունները ոտնահարում են «Four Assist Development Consulting Limited» ըներության իրավունքները և վնաս պատճառում նրա գործարար համբավին: Հետևապես, խնդրում ենք Վերահսկիչ Պալատին հաշվի առնել այս խնդիրները և ճշգրտումներ մտցնել հաշվետվության համապատասխան բոլոր բաժիններում:

Հարգանքով՝

Մարիա Տասիուլա

Լիազոր ներկայացուցիչ

«Four Assist Development Consulting Limited»